ՄԵՐԵՆԵՄ - ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Ես Եկեղե-
ցարոյցի ընտրութեան վրայ չսխալուիմ. պի-

տի համաձայնիմ Ստեփան փառային զիտողութեան միայն մէկ տարբերութեամբ մը՝ զոր պիտի բացատրեմ : Երկու կէտ կայ կատարուած ընտրութեան մէջ նկատառութեան արժանի, մէկն այն է որ նախ Արթուրին Եփէնտի ընտրուեր է և նա չէ ընդուներ, միւսն է անոր տեղ Քիւրքճիխանեան Եփէնտի աւանդին, ստիկոս 73 ի Վարչութեան հրահանգին համաձայն եղած է, բայց այդ հրահանգը վաւերացուած չէ այս ժողովին, եթէ վաւերացած ալ ըլլար, այնպիսի թերութիւններ ունին՝ որ ուղղութեան կը կարծուի : Բայց Ստեփան փառային իւր զիտողութիւնը սա եղբորացութեամբ վերջացուց թէ կամ պէտք է հրաժարուիրը հաս զար և հաս սրտունն ստանար, և կամ հրաժարուցին տեղ յաջորդ աւանդն օրէնքի մէջ զեռեզել, հաս մեծ սխալ մը կայ, որ պէտք է շտիկուի, ես եթէ Եփէնտարուցի ըլլամ և զիտում որ Սարգիս Եփէնտի մերժած է և չէ ընդունած իւր ընտրութիւնը, ինչ զիտեք որ ես իմ քուէս Քիւրքճիխանեան Եփէնտիին թէ ոչ անկէ ետքինն պիտի տայի : Ուստի հրահանգին այդ կէտը սրբազրել պէտք է :

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՖ. — Ես ալ այնպէս կ'արձեւեմ թէ Սարգիս Ժողովի կանոնադրութիւնն այդ արտօնութիւնը սուսած է Ընտրող Ժողովացի մասն զի կանոնադրութիւնը կըսէ թէ ժողովը չը վաւերացնէր այն ընտրութիւնն որ ընտրուցին յանձնառութիւնն սարահալի ծանուցադիր չունի Ընտրող Ժողովին կողմէ : Եթէ փառային ըսածին համեմատ Ընտրող Ժողովներն իրաւունք չպիտի ունենան հրաժարուցին տեղ յաջորդն աւանդու, այն ատեն ընտրութեանց վաւերացումն ետ պիտի մնայ և ժողովը պիտի պարտաւորի բանակցել և ի հարկին նորէն ընտրութիւն ընել ստալ : Ստոր համար ես կ'արձեւեմ թէ կանոնադրութիւնը լռելեայն սուսած է Ընտրող Ժողովացի յաջորդն աւանդու իրաւունքը :

ՍՏԵՓԱՆ ՓԱՇԱ ԱՍԼԱՆԵԱՆ. — Ըստ որում այս խնդիրն իմ զիտողութեանս վրայ ծագեցաւ, հարկ կ'համարեմ կարճ վերջարան մ'ընել : Իրաւունք է որ իւրաքանչիւր թող իւր ընտրուածն ունենայ այս ժողովին մէջ, իրաւունք

է նաև որ Արթուրին ժողովն որ զԱրթին կներկայացնէ, իւր կողմութեան վրայ ինը հսկէ, ուստի այս կողմութիւնը հանդանակող ստորեւայ ամեն մէկն Արթուրին ժողովն է որ կ'ընտրուի կամ կ'վաւերացնէ, մասն զի Արթուրին ժողովն բարձր ուրիշ հեղինակութիւն մը չկայ, սախ ըսկըղուներ մ'է, որով չէր կրնար բաժնուիլ : Ըսկըղուներն վրայ համաձայնելէ ետև, գործնակաւնին դարձի կրնայ այնպիսի եղանակներ գտնուիլ որ դժուար սրտազայներու մէջ գործադրութիւնը զիւրացնեն, օրինակի համար՝ վիճանակ քուէարկութենէն ետև ընտրուցին յանձնառութիւնն խնամարտ, ընտրելուց ցուցակին շինուած ժամանակ և կամ ուրիշ կերպով կրնայ տնօրինուիլ, բայց հիմա խնդիրը գործադրական եղանակին վրայ չէ, այլ էսկան կէտին վրայ : Պարզ ընտրական հրահանգին զոր վարչութիւնը զրկեր է թաղերուն, սա այժմ այդ հրահանգը քանի որ ժողովը վաւերացուած չէ, չեղեալ կը նկատենք Քիւրքճիխանեան Եփէնտի ընտրութեան համար, անոր ընտիր հանգամանքը ճանչցողներն մէկն ալ ես եմ, և բարեւարչութիւն մ'է մեզ այնպիսի արժանաւոր ընկեր մը ունենալ այս ժողովին մէջ, ուստի կըրնանք ընդունիլ այս ընտրութիւնն իւր վերջին բացառութիւն, ուրիշ անգամ չ'ընկուելու պայմանաւ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն կ'ընդունիր որ սկզբունքի դէմ է այս եղածն :

ՁԱՅՆԵՐ. — Ս. յո՛, այո՛ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ի՛նչ ալ մը կայ՝ որ գուցէ սխալ ըմբանուած է, և այս է. թէ և այն ընտրական հրահանգն՝ որոյ համեմատ ներկայ ընտրութիւնը կատարուած են, չէ թէ արդի վարչութիւնն, այլ իւր նախորդն է զրկողը, սակայն արդի վարչութիւնն ալ ընդուներ և պաշտպաներ է զայն, մեր կողմէ ալ մինչև հիմա զիտողութիւն մը եղած չէ այդ մասին : Բայց ես կ'ընտրեմ որ փառային ասկէ առաջ ալ անգամ մը այս ընտրութեանց ստիկոս զիտողութիւն և առաջարկութիւն ըրած է, ուրեմն թող հասնի զրով ստալ իւր առաջարկութիւնն

որ այս անգամ չ'թաղուի և նախորդութեան երթայ :

ՍՏԵՓԱՆ ՓԱՇԱ ԱՍԼԱՆԵԱՆ. — Ոչ ոչ, սա առաջարկութիւն չէ ըրածս. զիտողութիւն ըրի և կ'ընեմ թէ Եփէնտարուցի երեսփոխանական ընտրութիւնը կատարուելուս վաւերական չէ, չորս ընտրուելներն երեքին միայն ընտրական գործողութիւնը օրինաւոր են, իսկ չորրորդինը չէ, բայց այս վերջինն ընտիր հանգամանքն ստորժանիրը սրտառելու համար կ'ընդունիմ ըսի, ընտրութիւնը իւր բացառութիւնն :

Եփէնտարուցի ընտրական տեղեկագիրն վերաց զիտողութիւնը սղառելով, Ատենապետ է. ֆէնտին Ստեփան փառային զիտողութեամբն հանդերձ քուէի դրաւ զայն : Ժողովը միաձայնութեամբ ԸՆԴՈՒՆԵՑ և վաւերացուց կատարուած ընտրութիւնը :

- Հեռուագէս՝ երեսփոխան ՀՈՉԱԿՈՒՅԵԱՆ.
- Պողոս Եփէնտի Եանակոչեան
 - Զարեհ » Օգնական խմբագիր Քուրիկի
 - Սեդուհ » Մագաուտեան
 - Մկրտիչ » Քիւրքճիխանեան

Սոյն ընտրելոյ մէջէն Մագաուտեան Սեդուհ Եփէնտի իրրեւ անգամ Քաղ. ժողովոյ ներկայ գտնուած ըլլալով, Եախազահ Սրբազան Հօր հրաւիրանաց վրայ ներկայութեան սուսման ստորագրելէ ետև անմիջապէս բազմեցաւ ի շարս երեսփոխանաց :

Երրորդ՝ Գիտանը Նիկոմիդիոյ վիճակին ընտրական տեղեկագրոյն ընթերցմանն անցնելով, այն ինչ Ատենապետը Եփէնտի ընթերցումն սխալ էր, Տ. Մատթէոս Սրբազան ընդմիջելով խօսք ուղեց, և արուեցաւ :

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊՍ. — Գաւառական երեսփոխանաց ընտրութեան կանցնիւնը՝ մինչդեռ մայրաքաղաքի մէջ կատարուած երեսփոխանական նոր ընտրութեանց տեղեկագրեր կան տալիսին, ո՛ր են Իւսկիւտարի Ս. Խաչ և Ս. Ասրատեա թաղերու ընտրութեանց տեղեկագրերը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Վարչութեան ծանօթագրին մէջ այդ մասին տեղեկութիւն տրուած է թէ ուրիշ թաղերէ հասած ընտրական տեղեկագրեր ալ կան թէև, սակայն քննութեան կարօտ կէտեր նշմարուելուն համար Վարչութիւնը չէ կրցած զանանք ներկայացնել այսօրուան նիստին :

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊՍ. — Իւսկիւտար Ս. Ասրատեա թաղի երեսփոխանական ընտրութեան համար Սրբազան Պատրիարքն ինձ իրրեւ սա Քարողիչ թաղին հրահանգ զրկած էր սրտառելով՝ որ ընտրութեան տեղեկագիրը Զատիկն առաջ հասնեմ : Ես իմ սրտառքս կատարելի և ընտրական տեղեկագիրը ժամանակին զրկեցի : Յաւօր կ'ըսեմ որ Վարչութիւնն իր սրտառը չէ կատարած, երբ մեր մերը կատարելիւնը Սարգիս ինչ սրտառաւ Վարչութիւնը մինչև ցարդ յատուցեցուցեր է իւր քննութիւնը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Վարչութիւնը կը հրաւիրեմ որ սրտասխան տայ թէ ինչո՞ւ իւր սրտառը չէ կատարած այս մասին :

ՄԱԳՍՈՒՏԵԱՆ ՍԵՊՈՒՀ ԷՖ. — (Յանուն Քաղ. ժողովոյ) Մատթէոս Սրբազան իւր սրտառը կատարած ըլլալը յայտնեց, եթէ ժողովը պատշաճ կը դատի Վարչութեան ալ իւր սրտառը կատարած ըլլալու կամ չըլլալու մասին բացատրութիւնը լսել, թող որոշէ և զրաւոր հարցումն ուղղէ մեզ՝ որ ըստ կանոնի սրտասխանենք :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Հարցումը կը կրկնեմ :

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊՍ. — Կանոնադրութիւնը կըսէ թէ ատենական չըջանը Մարտի վերջերը ըմնալով փակուելէ ետև, նոր ընտրութիւնը ժամանակին սկսելով տարիկին պիտի աւարտին, և ժողովին տարեկան բացումն սուս պատրաստ պիտի ըլլան ընտրութեանց տեղեկագրերը, որովս զի առաջին նստին Օրատարըն անցնին Գիտանին կողմութեան հետ :

Արդ՝ մայրաքաղաքիս երեսփոխանական ընտրութիւնը կանուխէն կատարուած և տեղեկագրերը ժամանակին հասած ըլլալով, ցուարի է որ Արշալոյսը չէ կրցած զանոնք ամենը մէկանց ներկայացնել այսօր :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Վարչութիւնը ծանրօրէն պատասխանատուութեան տակ է. ի՞նչ պատճառաւ այդ տեղեկագրերը չէ բերեր հասանալով հարեորութիւն ունի այս խնդիրը, այս ժողովն, ինչպէս փառանք ըստ, իւր կողմաթեան տէրն է. Չտակէն առաջ ընտրութիւնը կատարուեր և տեղեկագրերն եկեր են. անկէ մինչև հիմա 50 օր է, և դեռ Քաղ. ժողովն իր բնութիւնը չէ լինցուցած :

ՄԱԳՍՈՒՏԵԱՆ ՍԵՊՈՒՀ ԷՖ. — (Յանուս Քաղ. ժողովոյ) Ըսի թէ Վարչութիւնը որատրաստ է պէտք եղած բացատրութիւնը տալ բոլոր նախահարցման օրինական ձևը պէտք է գործադրել :

ՍՏԵՓԱՆ ՓԱՇԱ ԱՍԼԱՆԵԱՆ. — Այս կէտը խիստ կարևոր է և նկատառութեան արժանի. որովհետև կանոն մը ունինք՝ որ կտրամադրէ թէ ժողովին նիստերը մայիսէն կսկսին, և մարտի վերջերը կգոյտին. ըսել է ժողովը տարւոյն մէջ միայն 11 ամիս ունի գործելու, բոլոր այս ալ անուամբ. վասն զի Չտակի և Ծննդեան ևն պատճառաւ ամբողջ տարին հազիւ 20-22 նիստ կրնայ ընել. կանոնը պայմանաւոր մը որոշած է երեսփոխանական ընտրութեանց վաւերացման համար, որ է մայիսին բացուելիք առաջին նիստը, պայմանաւոր մը ունենալ և ընտրական տեղեկագրերն սրտեալ ժաման պատրաստ չունենալ ծանր է մեզ. որ և է ընտրութեան մը արդիւնքն՝ որ տեղեկագրով կուգայ Վարչութեան, քննելու համար՝ Վարչութիւնն ուրիշ բան չունի, բոլոր եթէ սո՛ւ մէկ բանի կէտերը՝ որոշել. այսինքն, ընտրեալն Օսմանյի է, թէ չէ որոշեալ տարիքը ըստ պայման է թէ ո՛չ, մատարական կտրուութիւնը անկողմ է կամ չէ, դատարարեալ է կամ ո՛չ և կարգութիւն ունի՞ 75 զրէ տարեկան տարբ վճարելու Ազգին: Այս կէտերուն քննութեան համար

միթէ ամիսներ պէտք են. ոչ, միթէ Վարչութիւնը կկարծէ թէ ամեն բան ինք պիտի քննէ և եթէ եկած տեղեկագրերը պակասաւոր ըլլայ՝ կե՞ս պիտի գործնէ, ինչպէս որ ես ժողովին տեսնուած եղած ժամանակս տեսայ որ այնպէս կշարունակուէր և ղտողութիւն ըրի այդ մասին. եթէ Վարչութիւնն այս կարծիքին մէջ է, կը սխալի: Արդ բանի որ կանոնին այն տրամադրութիւնն՝ որոյ համեմատ ընտրական տեղեկագրոյ ամենն ալ պէտք է ին այսօր ներկայացուի ժողովոյս, անգործադրելի կմնայ, և այս կերպով ժողովը անդամաւորութեան և անգործութեան կը դատարարուի, պէտք է պահանջենք Վարչութեանն՝ որ յաջորդ նստին անպատճառ բերէ բոլոր այն տեղեկագրերը՝ զորս այսօր չէ կրցած բերել, և այսպէսով գոյնք այս միջադէպը, հարցում չունինք և պատասխանի չենք սպասեր :

ԲԱՋՄԱԹԻԻ ԶԱՅՆԵՐ. — Կը կրկնենք :

ՄԱԳՍՈՒՏԵԱՆ ՍԵՊՈՒՀ ԷՖ. — (Յանուս Քաղ. ժողովոյ) Առանց ըսելու Վարչութիւնը դատարարուել չենք ընդունիր :

ՍՏԵՓԱՆ ՓԱՇԱ. — Կտակիք, երբէք դատարարութեան խօսք ընող չկայ :

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊՍ. — Գրաւոր հարցում կարահանջէ Վարչութիւնը :

ՍՏԵՓԱՆ ՓԱՇԱ. — Ի՞նչ իրաւամբ. հարցման խնդիր չկայ. Սահմանադրութիւնը և Ազգային ժողովոյ կանոնադրութիւնը զգած են որդէն ինչ որ պէտք է ընել Վարչութեան այս պարագային մէջ :

ՄԱԳՍՈՒՏԵԱՆ ՍԵՊՈՒՀ ԷՖ. — (Յանուս Քաղ. ժողովոյ) Այսօր կորոշուի դեռ այս քննութեանց մասին Վարչութեան հետեւելիք ընթացքը, Վարչութիւնը մինչև ցարդ ինչ հրահանգ որ դատած է, ըստ այնմ վարուած է. եկած տեղեկագրերուն մէջ զանազան թերութիւններ կնշմարուին, պէտք է յստակօրէն զրծուին Վարչութեան բնակելի կէտերն այս ընտրական խնդիրներուն մէջ :

785-54

ՍՏԵՓԱՆ ՓԱՇԱ. — Կանոնադրութեան ընտրական մասին վերաբերեալ յօդուածն :

Ատենապետը կարգաց հետեւեալը : « Յօդ. 3. — Ժողովը չվաւերացնէր զայն « ընտրութիւնն՝ որ ընտրեալին յանձնառութիւն « առահող ծանօթագիր չունի Ընտրող ժողով « վին կողմէ և ընտրելութեան պայմաններն ա « պահող ծանօթագիր՝ Պատրիարք Սրբազա « նին կողմէ . . . » :

ՍՏԵՓԱՆ ՓԱՇԱ. — Ընտրելութեան սպամաններ ըսելով կհասկցուին այն կէտերը՝ զորս սրահ մը յառաջ թուցի :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Եթէ ընտրական գործողութեանց համար բողոքներ կան, զանոնք ո՞վ պիտի քննէ :

ՍՏԵՓԱՆ ՓԱՇԱ. — Ազգային ժողովն ինք կրննէ յանձնաժողովի մը ձեռք, և եթէ հարկ զատէ Վարչութեան կյանքնէ քննութիւնը: Ըրազիրները կեցած են, կրնան բողոք բանալ եթէ ընտրական ղեղձում մը տեղի ունեցած է, կուսակցութիւններ ունինք, որոյ իւրաքանչիւրն ղինքը հաստատ բանելու համար որ և է պարագայ մը եթէ տեղի ունեցած է, չուտող երևան կհանէ. նոյն խի ես գիտցածներ ունիմ, զոր եթէ ուղէի կրնայի յայտնել ձեզ : Վերջապէս այս ժողովն որ Ազգին ամենէն բարձր ժողովն է, ինք կը անօրինէ իր կազմութեանը վերաբերեալ բաները. ուրիշը միջամտելու իրաւունք չունի, ինքն ալ ուրիշի կարօտ չէ :

Փաշային առաջարկութեան համեմատ և Ժողովին ընդունելութեան վրայ Ատենապետ է. ֆէնտի յետ հրաւիրելոյ դժադ. ժողովն՝ որ մը նայեալ ընտրական տեղեկագրոյ ամենն ալ յաջորդ նստին ներկայացնէ, գոցեց միջադէպը, և անցաւ Նիկովիոյ վիճակի տեղեկագրոյն ընթացման շարունակութեանը :

Ատենապետը էֆէնտի շարունակեց և լրացուց նոյն տեղեկագրի ընթացումն, որ է :

Ատենապետի Սրբազան Պատրիարք Հայր, Նախագահ Ազգային Ընդհ. Ժողովա Հայոց Թուրքոյ :

Մտրո 4 թուականաւ և 58 համարաւ առ Գեր. Առաջնորդական փոխանորդն վիճակիս ուղղեալ պաշտօնական գրութեամբ մի վիճակիս Գաւառական Երեսփոխանին հրաժարումը ծանուցանելով, կը հրամայէիք նոր երեսփոխանի մ'ընտրութիւնը փութով կատարել և ընտրական քննիչ մասնաժողովոյ կողմէ պատրաստուած յատուկ հրահանգին համաձայն տեղեկագրել Ձեր Բարձր Սրբազնութեան :

Վիճակիս Քաղ. ժողովն նախապէս խորհրդակցելով Գեր. Առաջնորդական փոխանորդի հետ և նոյն ընտրութեան ստիպողականութիւնն ընդունելով, որոշած էր Գաւառական Ընդհ. ժողովս գումարել և այս մասին պարտուարաւ չաճն 'ի գործ զնելու հոգն ինքն ստանձնելով, թողարած էր նորին Գերապատուութեան մեկնել 'ի Կէյօէ և յԱտարադար վասն կարգադրութեան ինչ ինչ ստիպողական գործոյ :

Արդ, ըստ այնմ նախորդ կարգադրութեան՝ այսօր գումարեցաւ Գաւառ. ժողովս, որ ինչպէս գիտէք, 42 երեսփոխաններէ կը բաղկանայ և 31 երեսփոխանաց մասնակցութեամբ քուէարկութիւնը կատարուելով՝ հետեւեալ արդիւնքն ունեցաւ .

- 1. Մեծ. Կարապետ էֆ. Ս. Խեթիճեան խորհրդակցութիւն 27
- 2. » Աւերբախ էֆ. Սաղայեան » 2
- 3. » Տօրթօր Ռախայէլեան էֆ. » 1
- 4. » Փեթրաք էֆ. Էսմէրեան » 1

Հետեւապէս Մեծ. Կարապետ էֆէնտի Ս. Խեթիճեան 27 քուէից ամենաբացարձակ առաւելութեամբ Գաւառական երեսփոխան ընտրուած ըլլալով, Գաւառական Ընդհ. ժողովս յիշեալ էֆէնտի Ս. Պաշայեան Վարչութեան հաստատութեանէ 'ի վեր խիստ արժանաւորութեամբ շարունակ երեսփոխանութեան՝ ստացուն վարելը նորա յանձնառութեան երաշխաւորութիւն մը համարելով, քաջայայտ է թէ այս անգամ ևս կը բարեհաճի ընդունիլ սոյն երեսփո.



խանական ընտրութիւնը և ազգասիրարար ներկայ գտնուել Ազգային պատկասելի ժողովոյը նիստերուն . ուստի Պաւառական ժողովս կը վաւերացնէ իւր այս ընտրութեան արդիւնքը Զեղ ներկայեւ առ ՚ի վաւերացումն :


Այսու պատեհաւ Պաւառ. Ընդհ. ժողովս պարտք կը համարի խորին շնորհակալութիւն յայտնել վիճակիս նախկին երեսօտիական Ալեմիւզիւրտանեան Մեծ. Տիգրան Էֆէնտի որ երկու տարիէն աւելի ժամանակ հաճեցաւ կատարել իւր երեսօտիական պաշտօնն ու արտատարութիւնը :

Մնամք Ամենապատիւ Բարձր Արքայնութեանդ ամենախոնարհ ծառայք

՚ի զխնայ Պաւառ. Ընդհ. ժողովոյ վիճակիս Նիկամիդիոյ Առօրեայ նախագահ ԱՐԻՍԱՒԷՍ ՔԱՀԱՆԱՅ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Քաննայոյի Ստեփանոս ԱԶԱՐԻԿ ԳԷՈՐԳԵԱՆ Ս. ՄԻՐԵԱՆ 1 մայիս 1877

Սաւաճնորդարանիս Հայոց Նիկամիդիոս



Ք.

ԺԱՆՍՈՐԹԱԳԻՐ ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Վսեմաշուք Ատենապետ

Ազգային երեսօտիական ժողովոյ

Երկրորդ վիճակաւ դադարեալ Պէշիկթաշ և Եէնի գախու թաղից երեսօտիականայ տեղ նորոգ ընտրութիւն կատարուած և տեղեկագրերը Ընտրողական ժողովոյ կողմէ հասած ըլլալով, Քաղաքական ժողովը բննեց ընտրելոց Սահմանադրական հանգամանքը և Սահմանադրութեան համեմատ դուռ : Ըստ ոչոյսմ Պէշիկթաշին երեսօտիական ընտրուած են

Անդրանիկ պէյ Արճիկեան
Ալիքրան Էֆ. Խօրատանճեան
Բարսեղ » Հարաճեան

և Եէնի գախուցէն երեսօտիական ընտրուած են,
Մկրտիչ Էֆէնտի Քիւրճիկեան
Սեպուհ » Մարտապետան
Պօլոս » Ժամակոչեան
Զարեհ » Օղնիկ. Խմբագր. Բարբէյի

Նոյնպէս Նիկամիդիոյ վիճակի հրաժարեալ երեսօտիականին տեղ կատարուած ընտրութեան տեղեկագրերը յիշեալ վիճակի Պաւառական ժողովոյն կողմէ հասած ըլլալով, Քաղ. ժողովը բննեց ընտրելոց Սահմանադրական հանգամանքը և Սահմանադրութեան համեմատ դուռ : Ընտրուած է

Կարապետ Էֆէնտի Խեթիճեան

Սոյն ընտրելոց յանձնառութիւնն ալ ուրս հաւուած ըլլալով, ընտրական տեղեկագրոց հետ ներկայ ծանօթագիրս կը մատուցանեմք Ազգային ժողովոյը ՚ի վաւերացումն, և կը յաւելումք նաև որ թէև ուրիշ թաղերէ ալ ընտրական տեղեկագրեր հասած են, սակայն բնութեան կարօտ կէտեր նշմարուելուն, Քաղ. ժողովս չէ կրցած զանոնք ներկայացնել Ազգային ժողովոյ ոչոսրուան նիստին :

6 մայիս 1877 Մնամք յարգանք

՚ի զխնայ Քաղ. ժողովոյ Աղբ. Վարչ. Ստեփանայոյի Քեր-Ստեփանոս ԅ. ՊՅՅԱՃԵԱՆ Ս. ՄԱՔՍՈՒՏԵԱՆ

Ի Պարբերմի ԶՀայոց Կ. Պօլիս

Ատենապետ Էֆէնտի Նիկամիդիոյ կարգացուած տեղեկագրին վրայ ՚ի զխոտրութիւն հրաւրեց զերեսօտիականներն :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Տեղեկագրին թուականն ի՞նչ է :

ԱՏԵՆԱԳՊԻՐ ԷՖ. — 1 Մայիս 1877

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Խօսք կուզեմ :

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊՍ. — Իւսկիւտարէն զրկած մեր տեղեկագրին թուականն ալ ըսեմ, մարտ 14 է :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Տեղեկագրեր կ'ըսէ թէ Պաւառական ժողովը 42 անգամ է կը բաղկանայ . այս ամէնուն հրաւիրն ե՞րբ եղեր է չ'ը յիշեր . Նիկամիդիոյ մը զիս տեսաւ . այսօր , որ սրտովս թէ սուանց սրտակալ բացակայ անդամոց՝ ներկայ գտնուողներուն թիւը բաւական համարուելով անմիջապէս ընտրութիւն կատարուեր է : Պահէ 8 օր սրայմանածամ՝ տալ հօրկ էր Պաւառ. ժողովոյ անդամոց , սրղէս զի հետադանուողներն ալ կարող ըլլային զալ ներկայ գտնուել :

ԱՏԵՖԱՆ ՓԱՇԱ. ԱՍԼԱՆԵԱՆ. — Երբ 42 անգամ անկեցող ժողովի մը 31 ին ներկայութեան 27 բուէով Խեթիճեան Էֆ. երեսօտիական ընտրուած է, բնաւ արբիւնութիւն մը չեմ տեսներ այս ընտրութեան մէջ : Քանի որ տեղեկագրեր բանի հողի դուանը նէ հրաւիրեցինք չ'ըսէր և քանի որ այս նկատմամբ բուն տեղէն բողբ ալ չ'կայ , ևս այնպէս կը հասկնամ թէ բողբ անդամոց ալ ժամանակին հրաւիրողը զրկուած և օրինաւորապէս ընտրութիւն կատարուած է : Ուստի Փաղաղեան Էֆէնտի զխոտրութիւնն իրաւացի չ'եմ գտներ և Խեթիճեան Էֆէնտի ընտրութիւնը վաւերացունել կ'աւաջարեմ :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Իւս խօսքս չ'աւարտեցի . ևս այնպէս կը հասկնամ տեղեկագրին թէ մի և նոյն օր Պաւառ. ժողովը հրաւիրուեր և միևնոյն օր ընտրութիւն կատարուեր է . այնպէ՞ս է մի , կը խնդրեմ , տեղեկագրին անգամ մ'ալ կարգացուի . . .

(Սյս միտցիկն տեղեկագրի կրկին կարդաց Ստեփանայոյի Էֆէնտի) Այսօր 1 մայիս գումարեցաւ , կ'ըսէ տեղեկագրին . ինձի տեղեկութիւն հաղորդողն ալ կ'ըսէ թէ օր առաջ հրաւիրողը զրկուած չ'է ամէնուն , և Նիկամիդիոյ մէջ զըստուող երեսօտիականները կանչեր անմիջապէս քուէարկութիւն ըրեր են : Ինձի ինչ որ հաղորդեցին , ևս ալ նոյնը ժողովին հաղորդել սրտաւոր եմ : Ուստի այս կէտը հարցնելու և ըստուղելու է Պաւառ. ժողովին : Սակայն ինչ զարմանալի զուգադիպութիւն է այս օր մինչդեռ

անդին Նիկամիդիոյ մէջ մայիս 1ին կատարուած ընտրութեան տեղեկագրին այդչափ ստիպողութիւն տալով՝ մայիս 6ին ժողովոյս կը հասցնեն , տարուած ընտրութեան տեղեկագրերը չ'են բերեր : Հարկաւ նկատուաներ կան ասօր մէջ , և մեր պէտք է զանոնք իրոյս հանենք : Սրբազան Հայրն իր բացման ատենաբանութեան մէջ գանգատեցաւ կուսակցութեանց դէմ . պիտի տեսնէ այժմ թէ սրչափ հարկուոր են կուսակցութիւնը որ ձեռք առնուած այլ և այլ դիտումներն կամ նկատումներն իրոյս հանեն և արգելուն . ինչպէս որ երեսօտիականական ընտրութեանց տեղեկագրերը բերելու կամ չբերելու մասին ՚ի գործ զրուած դիտումներն այսօր յերեան կելլեն : Խնդիրն մեզի համար Խեթիճեան Կարապետ Էֆէնտի անձին վրայ չէ , Խեթիճեան Էֆէնտի պիտանի անձ մ'է այս ժողովին համար . եթէ Պէշիկթաշին կամ Նիկամիդիոյն չ'ընտրէ զինքն , Վանային կամ ուրիշներ կ'ընտրեն անշուշտ : և ևս առաջինը կըլլամ անոր երեսօտիականական վաւերացմանը համար բուէ տալու . սակայն ինչո՞ւ համար Նիկամիդիոյ մայիս 1 ին ընտրութիւնը մայիս 6ին ժողովոյս կը հասնի , և Պօլոս մէջ երկու ամէն ՚ի վեր կատարուած ընտրութեանց տեղեկագրերը չ'են հասնիր մեզ . այս մասին բացատրութիւն չի ըսեցինք : Իւսկիւտարի Սէլամիէ թաղէն երեսօտիական ընտրուած է Ստեփան վաչան , տեղեկագրերը դեռ չ'բերուեցաւ հոս որ զխոտնար թէ պիտի կրնանք վաւերացընել զոյն և այսօր ատենապետի ընտրութիւնն ալ կատարել կամ ոչ :

ՄԵՐԵՆԷՄ-ԳՈՒԼԻ ԅ. ԷՖ. — Փախաղեան Էֆէնտի զարմանալի զուգադիպութիւն մը կը նրշմարէ Խեթիճեան Էֆէնտի ընտրութեան տեղեկագրոյն այսչափ շոյտ ներկայացուելուն և Իւսկիւտարինը ևս մնալուն մէջ : Հոս սղտի կէտ մը կայ զոր պարզել կ'ուզեմ : Խեթիճեան Էֆէնտի իրր Պէշիկթաշի երեսօտիական ինքզինք զաղարեալ նկատելով Քաղ. ժողովին զուգեք հրաժարական տուեր էր և չ'էր ուղեր այսօր ներկայանալ ժողովոյս . իսկ Քաղ. ժողովն

Նիկոսիոյ ընտրական տեղեկագրին օրինաւորութիւնն իւր քննիչ Յանձնաժողովէն ստուգելէ ետե թերեւ խեղճեան Էֆէնտիի փոփոխարութեանը փոխարէն քաղաքապարութիւն մը ընել ուղեւոր նոյն տեղեկագիրը փոփոխուցած ըլլալու է :

ՍՏԵՓԱՆ ՓԱՇԱ. — Էս դադարեալ երեսփոխաններէն մէկն եմ , և այժմ կրկին ընտրուած . բայց ընտրութենէս ետքը յանձնառութեան գրոյս լրագրաց մէջ հրատարակուելէն և Սրբազան Պատրիարքի հրատարակիչն ընդունելէ ետե , մտքէս ալ չէր անցնէր որ իմ ընտրութեանս վրայ Քաղաքական ժողովն քննութեան կէտեր նշմարեր է , որով իմ այսօրուան Ժողովին հրատարակիչս իմ նախկին երեսփոխանութեանս շնորհն է . եթէ զխնայի զայս , իր հաւատեմ Չեզ որ ես ալ չէի դար Ժողովիս , զի ես ալ խեղճեան Էֆէնտիի չափ ամօթխածութիւն ունիմ , թէև Քաղաքական ժողովին չէի զխնայ հրաժարելու համար , զի Երեսփոխանական ժողովին հրաւերին հրաժեշտը Քաղաքական ժողովին չարտիր սյլ նոյն խել Երեսփոխանական ժողովին :

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Ինչո՞ւ կերկարէր պատճառներ որոնելով , ես ատենարանութեանս մէջ բացատրեցի պատճառները :

ԵՆՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — Սրբազան Հօր այսօրուան ատենարանութիւնը լսելէ ետե , որով սէր քարոզեց և հրաւեր կարգաց մեզ սիրով ու մտաբանութեամբ վարուելու , չեմք չկըրնար կարծեմ չկարմրիլ եթէ նորէն իրարու գաղափարացը վրայ կասկածելու ելնենք կամ կասկածներ յայտնենք անոնց դէմ՝ որ այս տեղեկագիրները մեզ բերելու պաշտօնն ունին : Քանի որ մնացեալ տեղեկագրաց համար ըսուեցաւ որ անոնք ալ առաջիկայ նստին բերուին , ալ ինչ հարկ կայ անոնց վրայ խօսքն երկարել : Հիմա Նիկոսիոյայէն եկած ընտրական տեղեկագիր մը ունինք մեր սուջև , որու մասին մեզի հարկ եղածն է նկատել միայն թէ արդեօք կատարուած ընտրութիւնն օրինական թերութիւն մը ունի՞ թէ ոչ : Ահա այս է մեր ընկերն . երբ

խնդրոյն այս սահմանէն դուրս ելնենք , և փոխանակ տեղեկագրին օրինական կէտերուն վրայ վիճարանելու խուզարկենք թէ ինչո՞ւ Չ ամիս առաջ կատարուած ընտրութեան տեղեկագիրը չ'բերուիր և Յ օր առաջ եղածինը կը բերուի , այն ասան Սրբազան Հօր պատուէրին և խրատուցը համաձայն վարուած չ'ենք ըլլար , և ըրած յանդիմանութեանն արժանի կ'ըլլանք : Այս վայրկեանէն ետե մեր զմեզ ուղղել ջանանք . եթէ երբէք ես ալ մասնակից եղած եմ անուղիղ ընթացքի մէջ գտնուելու , իմ մասին պիտի ջանամ այսուհետե ուղղութեան դժէն չ'խտորելու : Սրբազան Հօրն ըսաւ թէ ամենուր նպատակը մէկ է , նա մեր խոստովանահայրն է , ուրեմն 'ի կարգ խնդրոյն դառնալով՝ օրինական կէտի մասին մեր զխոստովութիւններն ընենք :

Ինչիմիտէն տեղեկագիր մը եկած է , թե ըսա սրահասութիւն մը ունեցած լինի , զոր Ա արչութիւնը չէ կրցած շօշափել , և մեր այդ պահասութիւնը շօշափելով Ա արչութեան դէմ բան մը ըրած չենք ըլլար : Տեսնենք ուրեմն թէ իրօք այդպիսի սրահասութիւն մը կա՞յ : Փափաղեան Էֆէնտի ի լրոյ խմոցածը հաղորդելով ըսաւ թէ Պառաւական ժողովոյ անդամք ժամանակին չեն հրաւիրուեր , ես այդ զխոստովեան զլիսովին անհամաձայն պիտի լինիմ . վասն զի եթէ ստուգուի խել որ միւսնոյն օրը հրաւիրուեր և ընտրութիւնը կատարեր են , միթէ այս պարագայն սրատճառ կրնա՞յ ըլլալ օրինապէս կատարուած քուէարկութիւն մը ոչընչացնելու , ո՞չ . մանաւանդ որ այս մասին բողբոջ չկայ , ինչպէս փաշան ալ ըսաւ , ուստի չենք կրնար հետեցնել թէ անկանոնութիւն մը պատահած է : Իսկ Փափաղեան Էֆէնտիի ըսածն ալ՝ թէ Նիկոսիոյայի երեսփոխանէ մը ըսած է , անհաւատովի է չեմ ըսեր , 42 անդամներէն 31ը ներկայ ըլլալով՝ 27 բուէ մէկ անձի մը սուեր են . ըսել է 4 ձայն սրահաս . միթէ չկրնա՞ր ըլլալ որ այս չորակն մէկն իւր ուղղածը ընտրուելուն համար այդ զխոստովութիւնն ըրած ըլլայ :

Խօսքս կվերջացնեմ եզրակացնելով որ քանի որ այդ կէտին վրայ բողբոջ մը չկայ , և քուէարկութիւնն օրինապէս կատարուած է , մեզի

ուրիշ բան չմտար ընել , եթէ ոչ վաւերացնել այն ընտրութիւնը :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Մայիս 11ն մինչև 6 բողբոջու միջոց չկայ , հաղիւ կարճ տեղեկութիւն մը ինձ հաղորդող գտնուեցաւ այսօր :

ՇԱՀՊԱԶ Ն. ԷՖ. — Ինձ համար ալ օրինաւոր է այդ տեղեկագիրը և պէտք է վաւերացնել . այսբան երկարել չարժէր :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Փափաղեան Էֆէնտի , շատ ըսա . բայց քանի որ զխանին վրայ այդ ձեղի ըսուածին համաձայն բողբոջու մը չկայ , աւելորդ է այլևս խօսիլ այս նիւթին վրայ :

ԶԱՅՆԵՐ. — Քուէի դրէր :

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊՍ. — Ինչպէս Սրբազան Պատրիարք Հօրն , նոյնպէս մեր երեսփոխանն ալ կրտարինք՝ որ սիրով վարուինք : Սէրը թաղաւորելու համար արդարութիւնը պէտք է գործադրել . երբ արդարութեան գործադրութիւն չըլլայ , սէրը չկրնար թաղաւորել . Ետե սուֆեան Էֆէնտի զուգադիպութեան տալու չէ ըսաւ , բայց ինչպէս կարելի է որ մտաւի մէջ կատարուած ընտրութեան մը տեղեկագիրը մայիս 6ին չբերուիր և մայիս 11ն կատարուածը մայիս 6ին կրերուի . միթէ ասոր մէջ արդարութիւն կա՞յ :

(Քննախոսներ)

Բաւական կհամարիմ այսչափը հաստատուելու համար թէ մասնաւոր զխոսում կայ այս պարագային մէջ . սակց պառջ գաւաւներուն մէկէն՝ չեմ յիշեր Պաղտատէն թէ Տիգրանակերտէն եկած տեղեկագիր մը Ա արչութիւնն ետ գործուցեր էր Պառաւական ժողովոյ անդամոյթիւր նշանակուած չըլլալուն համար . զիտէր Ա արչութիւնն այդ թիւը , բայց դարձեալ հարցուածել պէտք տեսեր էր , շատ աղէկ . Նիկոսիոյ տեղեկագրին մէջ ալ որ մայիս 1 թուականը կրկն , երբ կրէ թէ այսօր գումարեցինք ժողովը , թող հարցուի թէ արդեօք այսօր ըսելով մայիս 11ն հրատարակած է ժողովը : Նիկոսիոյ

շատ հետի չէ սակէ , այսօրվընէ հետագրով կրնայ հարցուիլ , եթէ մասնաւոր զխոսում մը չկայ . թող հարցուի և ետքը վաւերացուի : Այս է իմ ստաջարկութիւնս :

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Նիկոսիոյ տեղեկագրին ամթիւ զխոստովութիւն կըլլայ և կառաջարկուի հարցնել թէ Պառաւ . ժողովն ե՞րբ հրատարակած է , օրինաւոր է այս զխոստովութիւնը և ես ուղեւոր կասկածները փարատել , քիչ մը ստաջ Փոխանորդը քովս կանչեցի , և ցուցնելով իրեն Նիկոսիոյ զխանադարը Լակիճեան Խտարով Էֆէնտին՝ որ հոս ունիլըրաց մէջ կը գտնուի , հարցնել տուի և իմացայ որ սպրիլ 20 ին հրաւեր զրկուեր է մայիս 11ն համար . թէ որ Ժողովը կուզէ , նորէն թող հարցնէ Լակիճեան Էֆէնտին , ահա՛ հոս է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Օրէնք չէ որչի հարցնել . Չեր Սրբազանութեան վրայութիւնը բաւական է :

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Ուրեմն տեղեկագիրը քուէի դրէր :

Հետեապէս Ատենապետ Էֆէնտին քուէի դրաւ Նիկոսիոյ տեղեկագիրը եղած զխոստովութեամբ հանդերձ . ժողովը մեծադոյն մասի հաւանութեամբ ԸՆԴՈՒՆԵՑ և վաւերացուց կատարուած ընտրութիւնը : Ուստի երեսփոխան ՀԸՈՒԶԱԿՈՒՅԵԱՒ Կարապետ Էֆէնտի խեղճեան :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ստեանը պիտի գոցենք . որովհետեւ ժամանակը ուշ է , ուղերձի յանձնարարութեամբ ստաջարկուեցաւ , ինչ պիտի ընէր : Բայց անկէ առաջ Խօստովեան Պողոս վարդապետի ստորագրութեամբ նամակ մը կայ զիւսնին վրայ , այն կարդանք :

Չայս ըսելով Ատենապետ Էֆէնտին կարգաց յիշեալ նամակն որ է .

Վսեմափայլ Ատենապետ փաշա Սահմանադրութիւնը գործադրելու պաշտօնով ստժամանակեայ կերպիւ Պղկճիկ երթաւ .

լուս համար, կողաչեմ որ երեսփոխանաց ցանկին մէջ զիս ճանապարհորդ նշանակելու շնորհ ընէք :

Վսեմութեան ձերու՛մ

1877 Տորոս 27 Ս. Ղովարար ծառայ
Կ. Պոլիս ՊՕՂՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ
ԽՕԼՏԱՄԵԱՆ

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Ես առաջնորդի տեղապահութեան պաշտօնով զբիւժեմ եմ Պողոս վարդապետան, որեմն ճանապարհորդ զրեւն ինչ ըսել է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Ինք կըտէ թէ առժամանակեայ կերպիւ գնացեր է. ուստի ըստ օրինի ճանապարհորդ համարուելով հրաժարեալ չսեղաւիր. եթէ պաշտօնը շարունակելի ըլլայ, այն տանն գործը կ'իսխուի :

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Եստ աղէկ, որեմն որոշեցէք որ պաշտօնով դուրս զրկուած վարդապետներն այսուհետեւ ճանապարհորդ պիտի համարուին :

ԱՏԵՖԱՆ ՓԱՇԱ. — Ես որիչ ելի թի մը վրայ խօսելու համար թէ երեմն ելայ, բայց նախ Խօշտամեանի խնդրոյն վրայ Արքայան Հօր բրած զխտորութեանը պատասխանեմ : Արքայան Հայրն իրաւունք ունի վստանալու Պողոս վարդապետին ճանապարհորդ եմ գրելուն համար, եթէ ճանապարհորդ ըսելը միայն իր հաճոյիցն համար տեղ մը գացող ըսել է, բայց կարծեմ մարդ կրնայ զինքն ճանապարհորդ անուանել եթէ իր անձին առողջութեան և կամ մասնաւոր և առժամեայ պաշտօնով մը կը ճանապարհորդէ. եթէ Պողոս վարդապետը ստուգիւ Սահմանադրութեան դործագրութեան պաշտօնով տեղ մը զրկուեր է, պաշտօնն առ ժամեայ ըլլալով ճանապարհորդ ժամանակը ինքզինք ճանապարհորդ կրնայ անուանել և իրաւունք ունի, մանաւանդ այն պատճառաւ որ մեր կանոնադրութիւնը օրինաւոր բացակայ միայն անոնք կը ճանչնայ որ կամ կը ճանապարհորդեն կամ կը հիւանդանան և թաղերինն հրոյ ճարտի կ'երթայ : Բայց եթէ

Պողոս վարդապետն ո՛չ առժամեայ կերպիւ պաշտօնի մը կոչուեր է, ճանապարհորդ բառին պատրուակաւ Երեսփոխանաց կարգը չ'կրնար մնալ, զի անհնարին է Պատուատ պաշտօն վարել և միանգամայն Կ. Պոլիս Երեսփոխանութիւն ընել :

Գալով բուն խնդրոյն՝ որուն համար խօսք ուղեցի, այս է. Արքայան Հայրն իւր բացման ճառն առաջարկութեամբ մը վերջացուց, ըստ թէ Գողովոյն նոր տարուան շրջանը բանանք, բայց առժամանակեայ կերպով նիստերը դադարեցրենք, որովհետեւ ժամանակը փութուի է և վրտանդ կծագի ըստ, շատ ստոյգ և շատ նախատեսութեամբ զուրցուած խօսք մ'է այս. բայց սա ալ ստոյգ է որ եթէ կայ ժամանակ մը որ Աղգին Երեսփոխաններն պիտի է մեկտեղ խիտ առ խիտ մնան իրենց Պլիտոյն քով համարարեալ և իրարու աջակցութեամբ հակեն Աղգային իրանց պահպանութեան և օրինաւոր սեղանութեան տակ գործոց, այս ժամանակն է որ անխառն պատերազմ մը ամեն Աղգի բաղդն փտանգի ենթարկած է. ուստի ինչպէս զօրապետ մը՝ որ փտանգ եղած ժամանակ իւր դունդին գլուխը կանգնելով հրամաններ և հրահանգներ կուտայ, մեք ալ ամեն վտանգ յանձն առնելով պիտի է մէկտեղ մնանք և պաշտօնինս կատարենք : Հետեապէս Արքայան Հօր նախատեսութեանը շընորհակալ ըլլալով հանդերձ կառաջարկեմ որ շարունակենք մեր նիստերը. մանաւանդ անոր համար որ եթէ Աղգ, ժողովին նիստերը դադարին, Աղգայինք միայն զՎարչութիւն պիտի տեսնեն հսկող իրենց իրաւանց և ըստ որում Վարչութիւնն ինչպէս ամեն իշխանութիւն, անկարելի է որ ամենուրեք հաճելի ըլլայ և վստահութիւնը փայտի, ուստի Աղգն սրտի անձկութեան պիտի ենթարկուի. այս պոյմանաւ պիտի է մնանք և գործենք. բայց փափաքելի է որ հոս եկած առեւնիս ամեն բան մտնանք ազգին օգտին համար :

ՁԱՅՆԵՐ. — Ենորհակալ ենք :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Փառային Գողովոյն ըստ կանոնի շարունակուելու առաջարկութիւնը բուխի կ'ընեմ, ով որ կընդունի, ձեռքը վեր վերցնէ :

Գողովը միաձայնութեամբ ԸՆԴՈՒՆԵՑ Ստեփան փառային Գողովոյ գումարաւմները ըստ կանոնի շարունակելու առաջարկութիւնը :

Որոշուեցաւ յաջորդ նիստն 8 օրէն դումարել մնացեալ ընտրական տեղեկագիրները գալու պոյմանաւ, զոր ի դիմաց Վարչութեան Մագսուտեան Սեպուհ Էֆէնտի խաստացաւ բերել :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՅ. — Լսեցի թէ Կարապետ Էֆ. Պետկոնց ծանր և անբուժելի հիւանդութեան մէջ է եղեր. Կոստան փառա ալ պաշտօնով դուրս գացած է. ասոնք Միջագիւղի Երեսփոխան են, եթէ ստոյգ են, հրահանգ պիտի է զրկուի՝ որ ասոնց տեղ ուրիշներն ընտրուին :

ՓԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՅ. — Յարութիւն է Քէնտի Տատեան և Սիմոն պէյ Մագսուտեան երկու ամուսն բացակցութեան արտօնութիւն առած էին, բայց եթէն ուր ամիսներէ ի վեր բացակայ են, ասոնց համար պիտի է անօրէնութիւն մ'ընել :

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Կոստան փառա ճանապարհորդ է, անոր տեղ ընտրութիւն չըլլար :

ԱՏԵՖԱՆ ՓԱՇԱ. — Կարծելով թէ Խօշտամեան Պողոս վարդապետ Սահմանադրութեան գործադրութեան համար գացած է, իրաւունք տուի իրեն ճանապարհորդ գրելուն, բայց որովհետեւ այժմ կրնանամ որ առաջնորդական պաշտօնով զրկուեր է Արքայան Պատրիարք Հօր կողմէ, հետեւաբար ճանապարհորդ եմ գրելը Պատրիարքական և վարչական ակնածութեան դէմ ըլլալը բացարձակ կը հրատարակեմ :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՅ. — Ես ալ կը յայտարարեմ որ երեսփոխանական պաշտօնի մէջ զըսնուող եկեղեցականաց վրայ Պատրիարքական իշխանութիւնը այնպէս բացարձակ չտարածիր, ինչպէս որ կրնայ տարածիլ երեսփոխան չըլլալ նուող միւս եկեղեցականաց վրայ. վասն զի կըրնայ ըլլալ որ Պատրիարք մը (Ներսէս Արքայան) նին համար չէ (խօսքս) Գողովոյն մէջ գտնուած եկեղեցական կարեւոր անդամներէն մէկն երբ որ

ուղէ դուրս նետել, մինչև իսկ Գողովին օր մ'առաջ պաշտօն մը կուտայ անոր և դուրս կըլիկէ : Ամեն հաւանական պարագաները մտածել պիտի է. այս Գողովը պիտի ունի կարեւոր եկեղեցականաց, անոնցմէ ըստ անեւրու համար. ուստի դուրս նետուելու վտանգին մէջ չձգելու ենք զանոնք :

ՁԱՅՆԵՐ. — Սխալ է այդ կարծիքը. չենք ընդունիր :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՅ. — Ես իմ կարծիքս կարող եմ հաստատել : Սահմանադրութեան մէջ տեղապահ անուանով մնացուն պաշտօնեայ չը կայ. տեղապահութեան պաշտօնն առժամանակեայ է. երբոր եկեղեցական մը քուլով առաջնորդ ընտրուի և երթայ, այն ատեն կը սրբուի երեսփոխանական ցանկէն :

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Բաւական խօսուեցաւ այս խնդրոյն վրայ. գոհ եմ որ եկեղեցականք կարեւորութիւն ունին եղեր ամեն ժամանակ աշխարհականաց ըստ տարու համար, ինչպէս կըրնան Սուրբ Սահակ և Սուրբ Մեսրոպ. կը մաղթեմ որ եկեղեցական և աշխարհական այսպէս համընթաց երթան : Եթէ դուք հոս կարեւոր եկեղեցականաց այդչափ պիտի ունիք, հարազատուենք ո՞րչափ պիտի ունին, որ ամենին աւելի կարօտ է ժողովուրդը լուսատու հովիւներու. ես այս զխտորութիւնս որ ըրի Պողոս վարդապետի մասին, հասկընալու համար էր թէ արգեօք պաշտօնով դուրս զրկուած եկեղեցական մը կրնայ ճանապարհորդ գրել իրեն համար : Պափաղեան Էֆէնտի կըտէ թէ եկեղեցական երեսփոխանաց վրայ չտարածիր Պատրիարքական իշխանութիւնը. զայս չի զիտեր և նոր կրնանամ. եթէ այսպէս է, Գողովը թող որոշէ :

ՁԱՅՆԵՐ. — Պափաղեան Էֆէնտի այդ ըսածը չենք ընդունիր :

ԱՏԵՖԱՆ ՓԱՇԱ ԱՍԼԱՆԵԱՆ. — Եկեղեցական երեսփոխանաց վրայ պատրիարքական իշխանութեան սահմանի խնդիրը նոր է և ծանր. շտապաւ չկրնար լուծուիլ, բայց հարկ կը համար

ՅԱՐՈՅ ԺԱՅՆՈՐ

1	Ստեփանոս	1
2	Կարգ	2
3	Ստեփանոս	3
4	Ստեփանոս	4
5	Ստեփանոս	5
6	Ստեփանոս	6
7	Ստեփանոս	7
8	Ստեփանոս	8
9	Ստեփանոս	9
10	Ստեփանոս	10
11	Ստեփանոս	11
12	Ստեփանոս	12
13	Ստեփանոս	13
14	Ստեփանոս	14

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՅԱՐՈՅ ԺԱՅՆՈՐ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԳԵՒԻՆՍԻԱՆ ՍՆՏՈՒԻՆ

1	Ստեփանոս	1
2	Կարգ	2
3	Ստեփանոս	3
4	Ստեփանոս	4
5	Ստեփանոս	5
6	Ստեփանոս	6
7	Ստեփանոս	7
8	Ստեփանոս	8

Կը ծախուի ի Դի անատան Պատրիարքարանի . և Գաղաթիկի Կաթողիկոսի Եկեղեցւոյ Գանկալը և Հայ գրաւորանոց քով:

9	Ստեփանոս	9
10	Ստեփանոս	10
11	Ստեփանոս	11
12	Ստեփանոս	12
13	Ստեփանոս	13
14	Ստեփանոս	14